ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱՅԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑԻ

Ահա Նորան էլ խլեց գերեզման...
Հայի սրխրամած, խաւար երկնքից,
Ուր քանի մի աստղ փայլում են միայն
Մրուայլ ամպերի պատառուածքներից՝
Ընկաւ և մի աստղ յաւիտեան շիջած.
Ողբա՛, ով Մուսա, կորուստդ էր անդարձ։

*
* *

Հարազատ զաւակ խեղճ հայրենիքի՝
Բաղդակից էր միշտ երգիչը Նորան,
Սիրած ամբոխին կեանքը նուիրած՝
Որպէս մեծ փոքրին առաջնորդ դարձաւ,
Լացեց Նորա հետ, Նորա հետ ժըպտաց
Եւ Նորա նըման չարքաշ ապրեցաւ.
Շրջեց ափերով նա Մայր-Արաքսի,
Իմացաւ Նորա ցաւերն ու կըսկիծ,
Իբր երկրպագու ծերուկ Մասիսի՝
Ուխտ եկաւ Նորան հեռու աշխարհից.
Տեսաւ, շոշափեց իւր իսկ ձեռներով
Խեղճ ժողովրդի վէրքերը բացուած,
Տեսաւ նա աշխարհ պատած խաւարով
Եւ աւերակներ փոշու մէջ կորած...

*
* *

Ու երկար օրեր անոյշ քընարով
Նա լոյս, գիտութիւն, ուսումն քարոզեց,
«Հընութեան փոշին մեզնից թափ տալով»
Թըմրած սըրտերում նա յոյս արծարծեց։
Սիրեց հայ մանկտին և ոգևորուած
Տաղեր յօրինեց ուրախ մանկութեան,
Ուսուցչի անվերջ տանջանքն յանձն առած՝
Զոհեց տարիներ նորա կըրթութեան.
Առեց նա բոլոր սըրտով հարըստին,
Կեղծին, անպէտքին քարշեց նա հանդէս
Եւ ճըշմարտութեան սուտ ջատագովին
Ծաղրով, թըքելով հանեց ասպարէզ.

*
* *

Եւ անոյշ էին նորա քաղցրաձայն
Քընարի երգեր. ամբոխն հըմայւած
Բերան սերտեց այդ տաղեր դիւթական,
Որ երկար օրեր պահէ անմոռաց,
Որ երգէ և մեծն, երգէ պատանին,
Որ միշտ ուսանի այդ վեհ քարոզով,
Որ միշտ արձագանք գըտնի իւր սըրտին
Երգչի յիշատակն օրհնարանելով։

2 սեպտեմբերի, 1892 թ. Ջալալ-Օգլի։